Հետագայում Նոր Երկրում կրթություն ստացած առաջին սակավաթիվ հայերը մասնակցել են ԱՄՆ-ի միավորման համար մղված քաղաքացիական պատերազմին (1861-1865 թթ.)՝ տրամադրելով Հյուսիսային բանակում մարտնչող 30 կամավոր (այդ թվում՝ խասզուուցի Արմենակը) և գորակոչված 1 շարքային զինվոր՝ Խաչատուր Կարապետյան անունով: Խոկ Ֆիլատելֆիայի հիվանդանոցներում անձնվիրաբեր իրենց մասնագիտական ծառայությունն են մատուցել ԱՄՆ-ում բժշկություն ուսանած

առաջին ամերիկյան զինվորը հայ էր:  
Խսպանա-ամերիկյան պատերազմում  
աչքի ընկած հայազգի զինվորականնե-  
րի թվում էին ԱՄՆ-ում բժշկական  
կրթություն, իսկ ավելի ուշ հարյուրապե-  
տի կոչում ստացած չմշկածագի դոկ-  
տոր Ս. Մ. Լոնգը (Ուղունյան)՝ Կալիֆոռ-  
նիայից, տասնապետ Զիմ Պետրոս Չան-  
գայյանը՝ Նյու Զերսի նահանգից և այլք:  
Վիրաբուժական իր հմտություններով ա-  
մերիկյան բանակում ծառայել է դոկտոր  
Միհրան Գասայյանը (հետագայում՝  
Փիլադելֆիաբնակ ամերիկահայ օյու-  
տարար, որը հանրահայտ էր ունտգեն-  
յան ճառագայթների հայտնագործման  
ասպարեզում աշխարհում առաջնեկը լի-  
նելով և զոհ էր գնացել իր իսկ հայտնա-  
գործությանը):

Առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1918 թթ.) հազարավոր ամե-

**զնահատանքին ու տարբեր աստիճանի  
պարզեցների:**

Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թ.) ամերիկահայերը պատերազմի ամբողջ ընթացքում և ռազմական բոլոր գրոծողություններում հավասարապես մարտնչել, զոհվել և հաղթանակել են՝ հանուն որդեգրած Երկրի պաշտպանության և համայնքարդկության ազատագրման:

Պատերազմի ամենածանր տարիներին ԱՄՆ-ի 10 միլիոնանոց բանակի կազմում, ամերիկյան զինվորի հետ կողք կողքի, բոլոր գորատեսակներում (հետևակ, ռազմաօդային և ռազմածովային ուժեր), բոլոր ռազմական գործողություններում (ասիական-խաղաղօվկիանոսյան, Եվրոպական-աֆրիկյան-միջնարևելյան, օսմար ռազմաշրկատներ) ծառայել են 18.500-20.000 ամերիկահա-

# ԱՄԵՐԻԿԱՆՑԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՎԱՐԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ

1607 թ. Լոնդոնի Վիրջինիա ընկերության  
կողմից Ամերիկայի հյուսիսում՝ Ձեյն-  
թառնուում, հիմնված Վիրջինիայի գա-  
ղութք Նոյն բվականին բնակեցվել է լեհ,  
գերմանացի և հայ աշխատավորներով,  
որոնք եկել էին գաղութի «պատվար ու  
փրկչի» հանդիսացող քանայոթամյա  
կապիտան Ջոն Սմիթի հետ՝ Նրա հրամա-  
նատարության տակ չորս տարի Յուն-  
գարիայում թուրքերի դեմ կռվելուց հե-  
տու: Նրանք ճամանակցել են նաև ինդիա-  
ցիների դեմ գաղութատերերի մղած  
կրիվներին՝ նպաստելով նորաստեղծ  
Վիրջինիայի գաղութի քաղաքական ա-  
ռաջոնագին:

Չնայած Վերիիշյալ իրողությանը, տասներկու տարի շարունակ հայերն ու նրանց հետ ժամանած մյուս աշխատավորները գտնվել են ստրկանան վիճակում և անգլիացիների աչքում դիտվել իրքն «ստորակարգ օտարականներ»՝ զուրկ քաղաքացիական, տնտեսական ու քաղաքական իրավունքներից: Ասա թե ինչու, 1619 թ. Զեյմսթառնում հայերը լեի, գերմանացի և իոլանդացի աշխատավորների հետ միասին մասնակցել են «Ամերիկայում հասարակ մարդկանց իրավունքների ընդարձակմանն ուղղված քաղաքական գիտակցված առաջին ընբռստությանը», որը միաժամանակ հանդիսացել է Նոր Աշխարհում մարդկային իրավունքների ոտնահարման դեմ մնդվոր պայքարում տարրեր ազգերի ներկայացուցիչների միասնականության դրսնորման փայլուն օրինակ: Դայտնի է, որ ապստամբությունն ունեցել է «բարեկածող ավալոտ», քանի որ նույն թվին Ամերիկայում ստեղծված առաջին ներկայացուցչական ժողովը՝ Զեյմսթառնի Քաղաքացիների Տունը, որուն է, որ «նրանք (ապստամբած աշխատավորները - թ. Ա.) պետք է ազատ արձակվեն և լինեն ազատ այնպես, ինչպես այդտեղի զանկացած բնակիչ»:

1776 թ. Ամերիկայի անկախության համար մղված պայքարում հայերի մասնակցության մասին պահպանվել է հետևյալ հիշատակությունը: Յեղափոխության հաղթանակին նախորդող դաժան ու ցրտաշունչ ձմեռային մի գիշեր երկու խարբերդցի հայեր Կելլի Ֆորդի զինվորական իրենց պահակակետում կանգնած կարոտով վերիիշում էին իրենց հայրենիքը, երբ նրանցից մեկը մյուսին դիմում է՝ ասելով. «Սարգիս Եղայր, ի՞նչ հիմար էինք, որ թողեցինք մեր գեղեցիկ երկիքը, որպեսզի մահու չափ սաշշենք այստեղ»: Ապստամբ գաղութերի զինված ուժերի գլխավոր հրամանատար Զորջ Ուաշինգտոնը (հետագայում՝ 1789-1797 թթ., ԱՄՆ-ի առաջին նախագահ), որն այդ պահին հեծյալ անցնում էր անելու հասերեն հոգավածություն

շտապ օգնության վիրաբույժ դոկտոր-ներ՝ բժիկապետ, պոլսեցի Միմոն Մինասյանը (նրա օգնականներն էին Նարինյանը՝ Զնյուտնիայից և Զորա Թեոդորյանը), Կարապետ Գալուստյանը, ակնեցի Պարոնիկ Հակոբ Մաթևոսյանը (հետագայում՝ տպարանապետ, օսմանյան պալամենտի անդամ): Երկրի միավորման ու խաղաղության համար մարտնչող երևելի ու ազդեցիկ հետորներից էր ամերիկյան հնագույն տոհմից սերված, ծագումով հունգարահայ փաստաբան ու քարոզիչ Թոմաս Քորվինը՝ Օհայոյի նահանգից, որը վարել է պետական բարձր պաշտոններ (ԱՄ-ի Պետական գանձարանի քարտուղար, Օհայոյի նահանգապետ, երկար ժամանակ նույն նահանգի



Վիրաբույժ դրկտորներ Կարապետ  
Գալուստյանը և Պարոնիկ Յակոբ  
Սաքելույանն ամերիկյան  
հենվորական բժիշկ հանացանձնութիւն

Աերկայացուցիչը Կոնգրեսում, 1861 թ.  
Մերսինաւում ԱՄՆ-ի դեսաան):

Ամերիկահայերն աննասն չեն մնացել նաև 1898 թ. խաղանա-ամերիկյան պատերազմից: Գրեթե բոլոր ռազմական գործողություններին ԱՄՆ-ի գինված ուժերի կազմում իրենց հերոսական մասնակցությունն են բերել նաև համիլյան (1894-1896 թթ.) ջարդերից ծողովարձ և Նոր Երկրում ապահովություն գտած բազմաթիվ հայեր: Սան Զուանում, Դավանայում, Մանիլայում և այլ Վայրերում մղված մարտերին հերոսաբար կովկը են բազմաթիվ հայագօի կամավորներ, շարքային գինվորներ, ինչպես նաև բժշկական անձնակազմի ներկայացուցիչներ: Ի դեմ, Մանիլայում ծավալված ոռերրուրային նիւեր ժամանակ ասե եաւ՝

የኢትዮጵያውያን ከዚህ የሚከተሉት ስልክ በፊርማ ተስተካክለ ይችላል፡

የኢትዮጵያውያን ከዚህ የሚከተሉት ስልክ በፊርማ ተስተካክለ ይችላል፡

Հիշատակության են արժանի Առաջին և Երկրորդ աշխարհամարտերին իրենց հերոսական մասնակցությունը բերած և ԱՄՆ-ի բարձրագոլով շքանշանին, ապա նաև՝ զինվորական կոչմանն արժանացած հայորդիներ Կարդան Աղաբարյանը և Հայկ Շեքերջյանը։ Դարասկզբին ԱՄՆ մէկնած, ծնունդով վանեցի, առաջին կարգի շարքային Վարդան Աղաբարյանը՝ Սփրինգֆիլդից, Առաջին աշխարհամարտի իրենց սկզբից զինվորագրվել է ԱՄՆ-ի զինված ուժեր՝ որպես թշկական անձնակազմի աշխատող։ Նա առավել աչքի է ընկել 1918 թ. սեպտեմբերի 28-ին Ֆրանսիայում Մյուլցե-Արդոնի հերոսական պաշտպանության ժամանակ և վաստակել ԱՄՆ-ի Երկրորդ բարձրագոլով պարզված Առանձնահատուկ ծառայության Խաչ շքանշանը, դառնալով այդ պատվին արժանացած առաջին ամերիկահայը, հետևաբար նաև՝ ամերիկահայ հերոսների նախակարապետը։ Պատերազմից հետո եղել է քաղաքացիական ծառայության աշխատող, ապա՝ մասնակցել նաև Երկրորդ աշխարհամարտին, լինայելով է 14 ամրամբ։

Կոնեկտիվիուտի նահանգի բնակիչների հզմիքի Հայկ Շեքերջյանը Նոր Երկիր էր եկել 1891 թ.: Նա ԱՄՆ-ի Ուեսթ-Փոյնթի ռազմական ակադեմիան ավարտած առաջին հայազգի գիննվորականն էր: 1917 թ. գեներալ Զոն «Բլեք Ջեք» Պերշինցի հետ ծառայել է Սերբիկայի սահմանի վրա, ապա՝ նաև ԱՄՆ-ում և Եվրոպայում: Հայկ Շեքերջյանը շարունակել է իր գիննվորական ծառայությունը նաև Երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում:

Ուազմական բժշկության ասպարեզում բացահիկ ու անգնահատելի դեր է կատարել դիմային պլաստիկ վիրաբուժության առաջնեկ, մայոր Կարագդաստ Ղազանչյանը, որն ամերիկյան և Եվրոպական գորածոկատներում ավելի քան 3.000 վիրավոր ու ջախճախված դեմքեր վերականգնելու իր հմտության համար Մեծ Բրիտանիայի Գևորգ V թագավորի կողմից պարզևատրվել է «Սրբ. Միքայել» և «Սրբ. Գևորգ» շքանշաններով: Ամերիկյան բանակի ծանաչված վիրաբույժներից էր նաև փոխգնդապետ Յ. Մալեցյանը և այլք:

ԱՄ-ի ռազմական ուժերում հերոսաբար մարտնչած բազմաթիվ հայեր արժանացել են Խարամակարգական ռարձու

յեր (1940 թ. ԱՄՆ-ում կար ավելի քան 200.000 հայ):

Ամերիկահայ զինվորների մեծ մասը  
վերադարձել է հաղթանակով, սակայն  
թիւ չեն եղել նաև հերոսաբար զոհված-  
ները (շուրջ 500 հոգի), վիրավորները  
(500-hց ավելի) և անհայտ կորածները  
(մոտավորապես 50 հոգի):

Նրանք արիաբար կռվել են Փիրլ-  
Յարբորի, Կորայսան ծովի, Միղուտի, հյու-  
սիսային Աֆրիկայի, Սիցիլիայի, Իտա-  
լիայի, Բիրմայի, Հնդկաստանի, Չինաս-  
տանի, Իրանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրան-  
սիայի, Բելգիայի, Գերմանիայի և այլ  
ռազմաճականացներում:

ԱՄՆ-ի կառավարությունը, բարձր գնահատելով ամերիկահայերի անմնացորդ նվիրվածությունը, խիզախությունն ու ռազմական ունակությունները, բազմաթիվ հայորդիների շնորհել է ամերիկյան բանակի ամենաբարձր աստիճաններ, պարզևատրել բարձրագույն կարգի շքանշաններով և հերոսի կոչումներով:

Այսպես՝ Երկրորդ աշխարհամարտի տարիներին Միացյալ Նահանգների ա-



ԱՍԽ-ի բանակի հայազգի առաջին  
օհներսա Յանի Շերեքը ամու

Մենաբարձր կոչում ունեցող հայագի  
զինվորականը գեներալ Չայկ Շեքերջ-  
յանն էր, որը 1942 թ. այդ կոչմանն էր ար-  
ժանացել նախագահ Ֆրանկլին Ռուզ-  
վելտի կողմից:

Միացյալ Նահանգների բացառիկ և  
ամենաբարձր պարզեցին՝ Կոնգրեսի  
Պատվո Ծքանչանին (որով ամերիկյան  
բանակից պարզեցատրվել էր ընդամենը  
87 մարդ) արժանացել էր ամերիկյան հե-  
րոս, ավագ Լեյտենանտ Էռնեստ Յ. Ներ-  
վիշյանն իր անօրինակ և գրեթե առաս-  
պելական Խիզախության համար, որ նա  
ցուցաբերել էր 1944 թ. մայիսի ի- >6  
լուսաւայի Ախուրեան վայրում: Լու-

# ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԸՆԴԿԱՄԿՅԱ ԱՆԻ

**➤1** հիրեմի հետ: 11-րդ դարում Անի բնակչությունը աճել հասել էր հարյուր հազարի: Ավելի ուշ այն ափսի դառնար մրցակից կայսրությունների բախումների մարտադաշտ, ինչը հանգեցրեց նրա ավելինամն ու ամայազմանը:

Այսօր հայրուրավոր հնագոյն եկեղեցիներ, գրադաշտական տաճարներ ու տարբեր շենքեր՝ մեծամասնությունը ավերված, սփռված են խորութերոդ ու լրված տարածքների վրա: Պեղումները բացահայտել են, որ այս տարածքը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, առնվազն Բրոնզե դարից, բայց Անիի ամրոցի մասին առաջին գրավոր հիշատակությունը պատկանում է թ. Ծ.-5-րդ դարին: 8-րդ դարի վերջում Անին իր մերձակա տարածքների հետ հայտնվեց Բագրատունիների հարստության հսկողության տակ: Քաղաքը սկսեց աճել թ. Ծ. 961 թվականից, երբ Բագրատունի Աշոտ 3-րդ թագավորը մայրաքաղաք Կարսից տեղափոխվեց Անի: Ընդամենը 40-50 տարվա ընթացքում Անին փորդիկ ամրոցից վերակերպվեց-դարձավ մեծ միջնադարյան քաղաք:

1880 թվականն էր, որ «Ընհանատակյա Անին», ինչպես տեղացիները կոչում են այն, առաջին անգամ հայտնաբերվեց: Գևորգ Գյուրջիկը, ով իր մանկության ու պատանեկության մեջ մասն անց էր կացուել Կարսում, Պողոսյան ազգանունով իր ընկերոջ հետ ճեղք նկատեց գետնի վրա: Նրանք սկսեցին փորել և հայտնաբերեցին մի ներ անձավ: Դա դարձավ աննկարագրելի հայտնագործության սկիզբը, գաղտնի ջրագծեր, անհայտ վանականների խցեր, աղործի սենյակներ, հսկայական միջանցքներ, բունելների ցանց, որոգայքներ և փակուղիներ հայտնաբերվեցին ինչ հայկական Անի քաղաքի ավերակների տակ:

ՍԵՆՅԱԿԱՆԻ մեջ մեկուն Գյուրջիկը մագաղաթի մի կտոր հայտնաբերեց: Թեև նա շատ լավ հասկանում էր հայերեն, մեծ դժվարություններ ունեցավ մագաղաթի գրվածքը կարդալու հարցում: Ինչպես հետագայում պարզվեց, գրվածքը Յայոց հին լեզվով էր առաջին նշանը, որ Ասիի ստորգետնյա աշխարհը չափազանց հին է: Որոշ ժամանակ անց Գյուրջիկը կարողացավ Վերծանել գրվածքի իմաստը: Նա պարզեց, որ դա մի վանականի գրած նամակ է մեկ ուրիշ վանականի: Գրվածքի համաձայն, այս վայրում եղել է հնագույն միջագետքան գաղտնի (էղոթերիկ) դպրոց: Գյուրջիկը իր հայտնագործության մասին պատմել է ամսագրում: Նա գրուն է. «Մենք հատկապես հ-

տաքրօրիված էինք մի նամակով, որի հեղինակը հիշատակում էր իր ունեցած խորհրդավոր տեղեկությունների մասին: Նամակի վերջին պարբերություններից մեկը հատկապես գրավեց մեր ուշարությանը: «Մեր թանկագին Դայր Թավկենտը հաջողել է Սարմանունքի եղայրության մասին իր հետազոտություններուն: Նրանց կազմակերպությունը իրականում գոյություն է ունեցել Սիրիանուշ քաղաքի մերձակայքում և հիսուն տարի առաջ, ժողովրդի գաղղից հետո, նրանք նույնպես զարթել են և տեղավորվել Իզրումին գյուղի մոտակայքում, Նիվիսի մոտից երեք օրվա ճանփորդության հեռավորության վրա», ապա նաննկը շարունակվում է այլ թեմաներով: Ինչը մետք ցնեցեամենաշատը՝ «Սարմունգ» բառն էր, ինչին մի քանի ամբամ համրիպել էինք «Մերինավաք» կրչվող գրքունքները: Սարմունգը մոգերի հանրահայտ դպրոցի անունն է, որ ավանդույթի համաձայն, հիմնադրվել է թ. Ծ. Ա. 2500-ական թվականներին՝ Բաբելոնում: Դամարդկում է, որ այն գոյություն է ունեցել մինչև թ. Ծ. 7-րդ դարը՝ ինչ-որ տեղ Սիջագետքում: Բայց նրա հետագա գոյության մասին որևէ մեկը որևէ տեղից որևէ տեղեկատվություն չուներ: Ընդունված է կարծել, որ այս դպրոցը տիրապետում էր հսկայական գիտելիքների և ուժեղ բազմաթիվ արենջանեների բանակի հներու»:

«Գյուղթիկի՝ 135 տարի առօպավս հայտնագործությունները չեն հաստափում մինչև 1915 թվականի պատմությունները։ Տարիներ անց, իստացի հնագետների խումբը հաստատեց, որ այդտեղ վաճական համալիր է Եղել», - ասում է պատմաբան Սեզայ Յազիշին, ով ելույթ է ունեցել Կարսի սիմպոզիումի ժամանակ։ Այդ ժամանակներից Անիի ստորգետնյա տարածքների նոր շերտեր են բացահայտվել։ Յագիշին ասում է, որ ստորերկրյա կարևորագույն կառույցների թվում են «Գիղեն Գելմեզ» անվանակոչված թունելը, Ընդհատակյա Անին և Գաղտնի դրույցը։ Ընդհանուր առմանք, այս պահին 823 ստորգետնյա կառույցներ են հայտնաբերվել Անիում, ներառյալ բնակարաններ, պահեստներ, մթերային խանութներ, վանքեր, մատուներ, ալրաղացմեր, ախորներ, ջրամբարներ։ Յագիշին պնդում է, թե ժամանակն է, որ աշխարհը լրջորեն ուսումնասիրի Անիի ընդհատակյա աշխարհը և անհրաժեշտ է հետագա ուսումնասիրություններ կազմակերպել այդ վայրում։ Կարսի սիմպոզիումը առաջին քայլն էր այդ նպատակին հասնելու ժամապարհին։

## ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՀԵԿ-Ը 30 ՏԱՐԵԿԱՆ Է

Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանը շահագործման է հանձնվել 1984 թվականին: Որոտանի կասկադի գլխային հիդրոհանգույցն է: ՀԵԿ-ի վերին մասում ստեղծվել է հոսքի բազմայա կարգավորման ջրամբար 218 միլիոն խորանարդ մետր օգտակար ծավալով: Ջրամբարի պատվարն ունի 87 մետր բարձրություն և 317 մետր երկարություն: Կայանում տեղադրված է 76 ՄՎտ ընդհանուր հզրորությամբ երկու հիդրոտուրբին: ՀԵԿ-ում ջրի ծախսը 30 մ<sup>3</sup>/վր է, հաշվարկային էջը՝ 394 մետր, էլեկտրաներգիայի միջին տարեկան արտադրությունը՝ 157 միլիոն ԿՎտ.ժամ: Հիդրոտուրբինից հետո օգտագործված ջուրը թափվում է գետը:



Յարի է Աշել, որ Յայաստանուն առաջին էլեկտրակայանը շահագործման է հանձնվել 1903 թվականին, Դիլիջան քաղաքում 10 ԿՎտ հզորությամբ Ապստու գետի վրա:

**Սակագիր կամ կուպուն**  
սյկական էներգետիկական ակադեմիայի նախագահ,  
տեխնիկական գիտությունների թեկնածու

# Միկրոբները հաղթում են դեղագործներին

# ԱՄԵՐԻԿԱՆԱՅԻՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ...

➤ 5 տաղի ընդհարման ժամանակ  
կորցնելով իր նարտական ընկեր-  
ներին և մեն-մենակ հայտնվելով թշնա-  
մական շրջափակման մեջ՝ նա կարողա-  
ցել էր ռազմական արվեստի իր աներևա-  
կայելի հնարքներով գերել հակառակոր-  
դի միահնգամից 45 զինվոր, խլել 3 գնդա-  
ցին և 10 աստղանակ:

Է. Ներվիշյանի հարազատ Ոչչմոնդ քաղաքը համընդհանուր տոն էր հայութաբել իր հերոսի Վերապարձի օր՝ այն հռչակելով որպես «Ներվիշյանի օր»: Եվրոպական և խաղաղօվկիանոսյան տարբեր շրջաններում իրականացրած փայլուն ծառայության համար է Ներվիշյանը պարգևատրվել է նաև արտասահմանյան մի շարք երկրների շքանշաններով: Պատեռասմի ամպա-

თეს ხელი დამატებულ ასთხოანიც გა-  
რაღია და ე. უნდა ჩაიგიანო აღმართებელ ს-  
ო ადგინდებ მარტინ ავალიშვილი. თეს ე.  
ამ მარტინ ავალიშვილი საქართველოს სა-  
მარტინო მარტინ ავალიშვილი:

Ամերիկահայ հերոս-գինվորների թիվը չափազանց մեծ է: Անհնար լինելով ընդգրկել բոլորին՝ Նշենք խոչը ճակատանարտերուն առավել աչքի ընկած, առաջանարտիկ մի շարք հայորդիների, որոնցից յուրաքանչյուրն օրույն կերպով է նաև արեն հաղթանակի նվաճնամու:

1941 թ. դեկտեմբերի 7-ին Խաղաղօվկիանոսում ամերիկյան 86 ռազմանավերի նկատմամբ ճապոնիայի իրականացրած հարյուրից ավելի ոնքահարումների ժամանակ, որոնց և ապամանավո-

የቴግና ወሆ-ካ እተያወጡበም ተሳታፊው አንቀጽ ከተማው አስተዳደር ነው፡ ይህንን ተመዝግበ አለው ተብሎ የሚከተሉት ጥናት ነው፡

Անչափ մեծ է Եղել ամերիկահայերը նվիրվածությունն իրենց որդեգրած հայրենիքին, որ բազմաթիվ ընտանիքներ ռազմաճակատ են ուղարկել միանգամից մի քանի զավակներ. զինվորագրածների թվում շատ են Եղել Եղել բայրներ և քույրեր, երկպորյակներ և Եղել յակներ, ամուսիններ, հայրեր և որդիներ, սպասարկուներ:

Համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան բանակի բոլոր ռազմատեսակներում ծառայել են հարյուրավոր հայութիներ, ընդ որում, ավելի քան քառասունը՝ ռազմածովային ուժերում, մյուսները՝ հետևակում և ռազմաօպակում:

Ամերիկահայերը, առաջնորդվելու  
«Պարտք-Պատիվ-Յայրենիք» ("Duty-  
Honor-Country") նշանաբանվ, ԱՄՆ-ի  
գինված ուժերի կազմում իրենց քաղաքացիական պարտքը են կատարել նաև  
Երկրի վարած կորեական (1950-1953  
թ.) և Լիբերիանական (1964-1968 թ.)

ինչպես նաև հետագա՝ Պարսից ժողի (1991 թ.), աֆղանական (2002 թ.), իրաք-յան (2003 թ.) և մյուս պատերազմների ընթացքում: Հաստեղը նույնիսկ մասնակցել են նի քանի պատերազմական գործողությունների: Այսպես, Զոն Ձերի Նազարյանը այլոց նման մասնակցել է ինչպես Երկրորդ աշխարհամարտին, այնպես էլ՝ Կորեական պատերազմին, իսկ գնդապետներ Բարբի Զորբյանը, Զոն Կիգիրյանը, ծովային ուժերի լեյտենանտ Կարլ Գարնիկ Մանակյանը, Վիկտոր Օհաննեսյանը և այլք՝ Երկրորդ աշխարհամարտին, կորեական ու նաև վիետնամական պատերազմների:

Անփոփելով նշենք, որ ԱՄՆ-ի յուրաքանչյուր քաղաքի հերոսաբար զոհվածների և Վերադարձածների Պատվո ցուցակներում մշտապես կարելի է հանդիպել հայության ժամանակակիցների:

ալը հայզակած սագամա ասուամիլ։  
Այսպիսով, ամերիկյան էթնիկ խումբ  
կազմող ԱՄՆ-ի հայությունը, Նոր Երկ-  
րում հաստատվելուց ի վեր, մշտապես  
արձագանքել է Երկրին սպառնացող  
վտանգներին, ինչպես նաև՝ ռազմական  
գրեթե բոլոր գործողություններին։ Ամե-  
րիկահայերն իրենց կյանք-արյունով ար-  
ժանավոր և գնահատելի ավանդ են  
ներդրել որդեգրած հյուրընկալ Երկրի  
առաջնորդական և ամեսակարգ աստ-

**Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ**  
**Պատմական գիտությունների  
թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության  
ինստիտուտի ավագ  
օհորակիանորո**



# ՏԵՂՈՒԹՅ և ՉԻՉԱԿԱ ՄԻՉԱՎԱՐԻՆ ՍՊԱՌՆԱԳՈԼ աղետը

Թեղուտի պրմանդիրքենային հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Թումանյանի շրջանում՝ Թեղուտ գյուղի 3,5 կմ դեպի հարավ-արևելք: Մինչ շահագործման հետ կապված տարածքի ծառահատումը հանքավայրի ողջ տարածքը ծածկված էր դարավոր կաղնիների, հաճարենիների, թխվիների, լաժիների և այլ ծառերի ու թփուտների սաղարթախիտ անտառներով:

Նախկին ԽՍՀՄ-ի տարիներին հետախուզված ու գնահատված այդ հանքավայրը շահագործման տակ չդրվեց անտառները չվնասելու պատճառով։ Եվ, չնայած հասարակական բոլոր կազմակերպությունների բողոքին ու պայքարին, մեր հարազատ կառավարությունը՝ թթելով ժողովրդի կարծիքի վրա, թույլատրեա որա շահագործման:

Նշենք, որ Թեղուտի համբավայրը Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հետազոտված է ոչ լիարժեք՝ խիստ թերի և ոչ բազմակողմանի:

Թեղուտի հանքավայրի շահագործման իրավունքը տրվել է «Արմենիան քափը փրոդրամ» փակ բաժնետիրական ընկերությանը, որն էլ ԽՄՀՍԴ-ի Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարների հավաստիության մեջ հանդույթու նպատակով հանքավայրի տարածքում կատարել է լրահետախուզական աշխատանքներ՝ իր թե «Հանքաքարերի պաշարներն ու մետաղների պարունակությունները ճշտելու նպատակով»։ Դե՛, եթե այդ բոլորը ճիշտ են, ապա ինչո՞ւ ընկերությունը հանքավայրը չի հետազոտել բազմակողմանի, չի որոշել հիմնական պիհն և մոլիբդեն տարրերի հետ հարակից տարածված բոլոր (հնարավոր) տարրերի պարունակությունները, և ինչո՞ւ ճշտված պաշարները վերահստատման չեն ներկայացվել ։ Պաշարների գործակալությանը:

Կարծում ենք, ավելի ստույգ համոզված ենք, որ դա չի արվել միտումնավոր, որպեսզի տեսանելի չդառնա, թե որքան արժեքավոր տարրեր են քափվելու պոչանքարներ, որոնք այնտեղ դառնալու են թունավոր ու խիստ կտանգավոր կենդանական աշխարհի հանրությունը:

Ապագաս աշխարհի հասարի:

Նշենք, որ սելենը և տելլուրը, որոնք առատորեն պարունակվում են Թեղուտի հանքաքարերում, խիստ վլանգավոր ու թունավոր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով (աղնձամնիդրենային կազմավորման հանքավայրերում հայտնաբերված են նաև շատ այլ թունավոր տարրեր՝ թալիում, բերիլիում, մկնդեղ, սնդիկ, կաղմիում և այլն, որոնք այստեղ դեռևս չեն հայտնաբերվել վաստ հետազոտվածության պատճառով): Ընկերությունը այդ թունավոր տարրերի մասին խոսել չէր կարող, քանի որ 2006 թ. կազմված «աշխատանքային նախագծում» (էջ 39) արտահրությունը պատճեն է Ավրուսիոսական պատճենահանության մեջ:



Թեղուտի հանքաքարերում ծծմբի պարունակությունը կազմում է 3,7%, որի հիման վրա ծծմբի պաշարների քանակը (հաշվարկված մեր կողմից) կազմում է 17 մլն 21,5 հազ. տոննա: Հանքավայրում հայտնի են սուլֆիդային հանքանյութերով ներկայացված պղնձի և մոլիբդենի պաշարները, որոնք հաճապատասխանաբար կազմում են 1.630.200տ և 99.117տ: Վերջիններիս մեջ էլ ծծումը տարրի քանակը կազմում է 1.712.202տ: Ծծումը տարրի ընդհանուր պաշարների և պղնձի ու մոլիբդենի սուլֆիդային հանքանյութերի մեջ պարունակվող ծծմբի քանակից ենթևով հաշվարկված երրորդ սուլֆիդային հանքանյութի՝ պիրիտի քանակը, Թեղուտի հանքաքարերում կազմում է 28 մլն 642 հազ.տոննա: Մեր և տեղական թունահարուց տարրերի քանակները պիրիտի հանքանյութի մեջ կազմում են. սելենինը՝ 572,85տ, տեղուտիրնը՝ 401տ:

Սելեն և տելլուր թռնահարույց տարրերի ջնդիհանուր քանակները պղնձի խալկոպիրիտ, մոլիբդենի մոլիբդենիտ և ծճնրի հրաքար պիրիտ հանքանյութերի մեջ համատեղ կազմում են. սելենինը՝ 2210,15տ, տելլուրինը՝ 409,3տ:

Ինչո՞ւ է կատարվել սոյն հաշվարկը։  
Դա կատարվել է այն պարզ պատճառով,  
որ այդ թվանահարույց տարրերի գերակշիռ  
մասը ի վերջո թափվելու է պոչամբարներ  
և որոնակությունը է որը շրջասարսոր։

«Արմենիան քայլություն է ունեցածաբավ» փակ բաժնետիրական ընկերությունը, որն արդեն հսկ Ակսել Է Թեղուտի հանքավայրի շահագործումը, չի պատրաստվում շուկա մտնել Վերջնարտադրանքներով և թողարկելու է միայն ու միայն պլանի և մուսունակ անդամություն ունենալու համար»:

ճառվելու են արտասահմանյան երկրներին. ի հիմնական օգտակար տարրերը պղինձն ու մոլիբդենը, գնահատելով կես գներով, իսկ մյուս հարակից բաղադրիչները «օտարելով» առանց գնահատման. Այս պարագայում պիրիտ հանքանյութի խտանյութ չի թողարկվելու, քանի որ մետալորդիֆական գործարան չի կառուցվելու և դրա մեջ գտնվող օգտակար տարրերը՝ ծծումբը, երկարը, սելենը, տելլուրը և սպասվող շատ այլ տարրեր չեն կորզվելու (պիրիտը որպես «անպետք թափոն» թափվելու է պոչամբարներ իր սելենի ու տելլուրի հսկա պարունակություններով կազմակերպություններուն հանդերձ ու թունավորելու շահագույն հաջողականությունը):

Թեղուտի հանքավայրը շահագործվում է բայ հանքի եղանակով։ Տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում (այդքան է պլանավորված արդյունահանել առաջին 8 տարիներին) պոչամբարներ թափվող պիրիտի քանակը կազմելու է 232 հազ.տ, որի մեջ ծծմբինը կազմելու է 124 հազ.տ, երկարինը՝ 108 հազ.տ, սելենինը՝ 4,64տ և տելլուրինը՝ 3,25տ։ Հարց. պոչամբարներ թափվող օգտակար (կործելու պարագայում) և բունավոր (միջավայր թափվելու պարագայում) տարրերի այս քանակները շա՞տ են, թէ՞ թի՛։ Պատասխանենք այս սահմանական համարում առաջարկութեան մասին։

շատ-շատ են թե իրենց արժեքային առումով, և թե վտանգավորության առումով։  
Տարրական հաշվարկները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքավայրի շահագործման պարագայուն միայն պիրիտի հանքանյութի հետ պոչանմբար թափվող ծունքը տարրի արժեքը մեկ տարվա կտրվածքով կարող է կազմել. 2008թ. մայիսի ամսվա գներով՝ 80,6 մլն դոլար, իսկ 2014թ.՝ գներով՝ 9,3 մլն դոլար։  
Յասամին է որ ծերմանուլությամ առ

Դայսուլ է, որ ստամպության ալիտադրական հզորությունը շահագործման առաջին 8 տարիներից հետո մեծացվելու է երկու անգամ, իսկ դրանից երեսում՝ 4 տարի անց՝ 3 անգամ։ Այստեղից էլ պարզ է դառնում, որ հարստապոչերի հետ պոչամբարներ (բնական միջավայր) բասինոր որոշակի լուսարդեն բարձականացնելու համար անհնարինակ է առաջանալու համար։

Ըերն էլ եռապատկվելու են:

Մինչ Թեղուտի հանքավայրի շահագործումը սկսելը մենք մեր գիտական հոդվածներից մեկում գրել էինք՝ «Ո՞չ հանքավայրը շահագործման «ընդունած» ծերներեց մարդիկ (հատկապես հայրենիքի սիրով հանակված՝ ծերներեց հայերը), և ոչ էլ Յայստանում ապրող ժողովուրդը, իրավունք չունեն հրապուրվելու մեջամեծ շահույթներով՝ շահագործելու Յայստանի գողտրիկ վայրերից մեկում՝ Լոռու գեղատեսիլ դրախտավայրում, չքանայ անտառներով ծածկված լեռնալանջերում ծվարած Թեղուտի հանքավայրը»։ Բերենք փաստարկմեր այդ հանքավայրի շահագործումից սպասվող վտանգների ու վնասների մասին, որոնք կշռքի նժարին դնելու պարագայում շատ ավելի ծանրակշիռ կլիմեն, քան մի-լիոն-միլիարդավոր դոլարների շահույթը, առավել ևս այն շահույթը, որը չի մնալու մեր ժողովորին և իր գեռակշիռ մեջամասնությամբ մտնելու է օտարերի գրաբան ու դուրս է տարվելու Յայստանից։

ՀՅ Կառավարության կողմից Թեղուտի հանքավայրի շահագործման համար հատկացվել է 1970 հեկտար հողատարածք, որից 1589,6 հեկտարը՝ անտառային ֆոնից: Դանքավայրի շահագործման նախագծի համաձայն բացիանքի տարածքը գրաղեցնելու է 240 հեկտար, պաշամբակի տարածքը՝ 214 հեկտար, մակարացնան ապարների լցակույտերինը՝ 107,4 հեկտար: Հայտնի չէ, թե որքան տարածք են գրաղեցնելու օժանդակ կառույցները՝ ճանապարհները, պահեստները, մեխանիզմների նորոգման հրապարակները, ձերւերն ու ձերւուրներն և այլն:

Հանգիստ ու շնորհընտանիլ և այլն.  
Ինչչից, ընկերությանը հատկացված հողատարածքն ամբողջությամբ դրվելու է հանքավայրի շահագործման և շահագործման հետ կապված օժանդակ կառույցների տակ: Բայց, անտառները ոչնչացման են ենթարկվելու ոչ թե 1589,6 հեկտար, այլ դրանից շատ ավելի: Եթե զարիթափ լեռնալանջերում անտառապատ բաց հանքի տարածքը գրադեգում է 240 հեկտար, ապա ոչնչացման ենթակա անտառների մակերեսը կարող է դրանից մեծ լինել մոտավորապես 3 անգամ: Բաց հանքից լեռնալանջերով վերև ընկած անտառները ևս ենթակա են ոչնչացման՝ այդ տարածքի ծառերը սննուցող ջուրը կորցնելով ներքի ապարների դիմադրությունը, ազատ և սրբնեաց հոսելու է դեսպի բաց հանքի դատարկ տարածքը, որի հետևանքով էլ բաց հանքից վերև ընկած տարածքի ծառերը չորսանալու ու ոչնչանալու են, հետևաբես ոչնչացման ենթակա անտառների մակերեսը կազմելու է ոչ թե 1589,6 հեկտար, առ մոտ 2070 հեկտար:

